

2008 թ. Հայաստանում տեղի ունեցած արտակարգ դեպքերը

Հանրապետության տարածքում 2008 թվականին տեղի է ունեցել 7788 արտակարգ դեպք, որոնցից. 4768՝ տեխնածին (դեպքերի 61,2 տոկոսը), 259՝ տարերային (դեպքերի 3,3 տոկոսը) եւ 2761՝ սոցիալ-կենցաղային (դեպքերի 35,5 տոկոսը): 2007 թ. համեմատությամբ արտակարգ դեպքերի թիվն աճել է 206-ով կամ 2,7 տոկոսով (2007 թ.՝ 7578 դեպք, 2006 թ.՝ 7138 դեպք, 2005 թ.՝ 4479 դեպք):

Նախորդ տարիների համեմատ աճ է գրանցվել միայն տեխնածին արտակարգ դեպքերի թվում: Նվազել են եւ՝ տարերային, եւ՝ սոցիալ-կենցաղային դեպքերը:

2008 թ. արտակարգ դեպքերի հետեւանքով զոհվել է 555 (2007թ.՝ 529, 2006թ.՝ 481), տուժել՝ 6686 մարդ (2007 թ.՝ 5866, 2006 թ.՝ 4577):

Նախորդ տարիների նման 2008-ին էլ զոհերի մեծամասնությունը բաժին ընկավ ճանապարհատրանսպորտային պատահարներին՝ 407 մարդ (ընդհանուր զոհերի մոտ 73,3 տոկոսը):

Տուժածների մասնաբաժնում կրկին առավելագույն ցուցանիշներ գրանցվեցին ճՏՊներից (3136 մարդ) եւ թունավորումներից (2864 մարդ):

Տարերային արտակարգ դեպքեր

Գրանցվել է 259 տարերային արտակարգ դեպք. զոհվել է 3, տուժել՝ 7 մարդ:

2007 թ. համեմատ գրանցվել է զգալի նվազում: Մասնավորապես, կտրուկ նվազում է գրանցվել ջրհեղեղների (71 դեպքով), սելավների (23 դեպքով), տեղատարափ անձրեւների (12 դեպքով) եւ ուժեղ կարկուտի (9 դեպքով) մասնաբաժիններում: Երկու դեպքով նվազել են սողանքները, մեկով՝ քարաթափումները: Աճել են փլվածքների (5-ով), ուժեղ քամիների (20-ով) եւ ձնաբսերի (12-ով) դեպքերը: Ինչպես նախորդ, այնպես էլ 2008 թ. գրանցվել է կայծակնահարման 1 դեպք, զոհվել է մեկ մարդ: Աղյուսակը 109 դեպքով գլխավորում են երկրաշարժները, որոնց թիվը նվազել է 48-ով:

Ջրհեղեղներ

Գրանցվել է ջրհեղեղի 15 դեպք:

Ջրհեղեղների պատճառ դարձան արագ ձնհալը՝ 7, հիդրոտեխնիկական կառույցներում վթարները՝ 5 եւ առատ տեղումները՝ 3 դեպք: Գարնան ամիսներին հանրապետության գետերում ջրերի ելքի վտանգավոր ցուցանիշներ չեն գրանցվել. անգամ արագ ձնհալի պարագայում վարարումներ տեղի չունեցան:

Ջրհեղեղների գերակշռող մեծամասնությունը՝ 11 դեպք գրանցվել է մարտին, 1 դեպք՝ մայիս, 3-ը՝ հուլիս ամիսներին:

Ջրհեղեղի 7 դեպք գրանցվել է Շիրակի, 3՝ Արագածոտնի, 2-ական՝ Գեղարքունիքի եւ Կոտայքի, 1՝ Արմավիրի մարզերում:

Սելավներ

Գրանցվել է սելավի առաջացման 5 դեպք, հինգն էլ հուլիսի 23-ին

Վայոց ձորի մարզում, ինչից զգալի վնաս է հասել մարզի ավտոճանապարհային ցանցին:

Փլվածքներ

Գրանցվել է հողաշերտի, լեռնային ապարների փլվածքների 8 դեպք, ինչի հետեւանքով զոհվել է 2, տուժել 5 մարդ:

Քարաթափումներ

Գրանցվել է քարաթափման 2 դեպք, տուժել է մեկ մարդ:

Մայիսի 5-ին Լոռու մարզի Ալավերդի-Ախթալա ավտոճանապարհի 10 կմ-ին անսպասելի առաջացած քարաթափումից խուսափելու հետեւանքով հարակից գետն է շրջվել «ՄԱՆ» մակնիշի կցորդով բեռնատար, ինչից տուժել է վարորդը:

Սողանքներ

Գրանցվել է սողանքների ակտիվացման 5 դեպք:

Ուժեղ քամի, տեղատարափ անձրեւ

Գրանցվել է ուժեղ քամու 44 դեպք: Սրանք մոլեգնել են հանրապետության գրեթե բոլոր տարածքներում, հիմնականում առաջին վեց ամսվա ընթացքում:

Գրանցվել է տեղատարափ, հորդառատ անձրեւների 7 դեպք:

Ձնահյուս

Գրանցվել է ձնահյուս, ձնահողմերի 27 դեպք: Աչքի ընկան հունվար (7 դեպք) եւ փետրվար (15 դեպք) ամիսները: Սեկական դեպք գրանցվեց մարտ, մայիս եւ նոյեմբեր ամիսներին, երկու դեպք` դեկտեմբերին:

Ձնահյուսը զգալ տվեց իրեն հատկապես Արագածոտնի մարզում, որտեղ գրանցվեց 14 դեպք. 13-ում ճանապարհների անանցելիության հետեւանքով արգելափակվեց շուրջ 120 ավտոմեքենա: Տրանսպորտային միջոցների արգելափակման 4 դեպք գրանցվեց Գեղարքունիքի (շուրջ 100 ա/մ), երեք` Սյունիքի, երկուական` Շիրակի (90ա/մ) եւ Լոռու, մեկ` Արարատի մարզերում: Ձնաբքի մեկ դեպք գրանցվեց մարտի 16-ին Սելիմի լեռնանցքում, որտեղ արգելափակվեց 53 տրանսպորտայինմիջոց: Առատ ձյուն տեղաց նույնիսկ մայիսին. ամսի 16-ին Լոռու մարզի Սարչապետ գյուղում ձյան շերտի տակ հայտնվեցին եւ շարքից դուրս եկան կարտոֆիլի ցանքատարածքները:

Կարկուտ

Գրանցվել է կարկտահարման 34 դեպք: Ինչպես 2006-2007թթ., աչքի ընկավ մայիսիուլիս ժամանակահատվածը. հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ա բ ա թ գրանցվեց կարկտահարման 12, 11 եւ 8 դեպք:

Կարկտահարում գրանցվեց սեպտեմբեր եւ անգամ` հոկտեմբեր ամսին. սեպտեմբերի 26-ին զգալի տուժեցին Վայոց ձորի մարզի Դանբատեղ գյուղի տնտեսությունները: Վնասվեցին բերքատու ծառերն ու բանջարաբոստանային կուլտուրաները, իսկ հոկտեմբերի 9-ին կարկուտն իր վերջին զայրութն արտահայտեց Արագածոտնի մարզի Զարթավան եւ Շենավան գյուղերում` վնասելով տնամերձ պտղատու այգիները:

Ցրտահարում

2008 թ. գրանցվել է վաղ վեգետացիոն շրջանում ցրտահարության 2 դեպք. ապրիլի 18-ին եւ մայիսի 8-14-ի ժամանակահատվածում ջերմաստիճանի կտրուկ անկման հետեւանքով Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում (ապրիլի 18-ին), ինչպես նաեւ Լոռու մարզի Սպիտակ, Տաշիր, Գուգարք, Ստեփանավան քաղաքներում եւ սրանց հարակից գյուղերում, Կոտայքի մարզի Բջնի գյուղում, Վայոց ձորի մարզի Յերմոն, Բարձրունի, Թառախունք, Սերս, Մարտիրոս, Քարագլուխ գյուղերում ցրտահարվեցին գյուղատնտեսական նշանակության տարածքները:

Երկրաշարժեր

Տարածաշրջանում գրանցվել է 109 երկրաշարժ: Հիմնականում գրանցվել են 1-4 բալ ուժգնությամբ երկրաշարժեր, որոնց հետեւանքով ավերվածություններ, զոհեր եւ վիրավորներ չեն եղել:

Տեխնածին արտակարգ դեպքեր

Հայաստանի Հանրապետությունում 2008 թ. գրանցվել է 4768 տեխնածին արտակարգ դեպք (2007 թ.՝ 4334, 2006 թ.՝ 4566):

Սրանց հետեւանքով զոհվել է 449, տուժել՝ 3220 մարդ:

Տեխնածին արտակարգ դեպքերի գերակշռող մեծամասնությունը՝ 98,7 տոկոսը բաժին է ընկել հրդեհներին եւ ճանապարհատրանսպորտային պատահարներին (ճՏՊ):

2007 թ. գրանցված զգալի նվազումը 2006 թ. համեմատությամբ (232 դեպքով) 2008 թ. փոխվեց ռեկորդային աճով եւ՝ 2006, եւ՝ 2007 թթ. համեմատությամբ (համապատասխանաբար՝ 202 եւ 434 դեպքով):

Ընդ որում՝ ոչ միայն քանակական առումով. 71-ով եւ 50-ով աճեց զոհերի, 1032-ով եւ 388-ով՝ տուժածների թիվը:

Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, 2006-2008 թթ. երրորդ եռամսյակներում գրանցվում է կայուն աճ հրդեհների եւ ճՏՊ-ների թվում, իսկ պայթյունների եւ փլուզումների թիվն ունենում է նվազման միտում առաջին եւ երկրորդ եռամսյակների նկատմամբ: Թեեւ չորրորդ եռամսյակում նկատվում է դեպքերի նվազման միտում, կտրուկ նվազումով աչքի են ընկնում միայն հրդեհները, այն էլ, մեծամասնությամբ, բուսածածկ տարածքներում հրդեհների նվազման շնորհիվ:

Հիշեցնենք, որ հրդեհներին անդրադարձել ենք առանձին՝ նախորդ համարում:

Փլուզումներ

Գրանցվել է շենքերի, շինությունների, առանձնատների, ինժեներական կառույցների տարրերի փլուզման 28 դեպք (2007 թ.՝ 72, 2006 թ.՝ 421), զոհվել է 4, տուժել՝ 7 մարդ:

Փլուզումների թվաքանակում գրանցվեց հերթական նվազումը՝

մոտ 2,6 անգամ:

Քսան դեպք բաժին է ընկել բնակելի շինություններին, որոնցից 14-ը՝ սեփական տներում եւ տնամերձ կառույցներում, վեց դեպք՝ բնակելի շենքերում եւ շինություններում: Երեք դեպք գրանցվել է արդյունաբերական օբյեկտների, երկուական՝ կազմակերպությունների եւ առեւտրի, հասարակական սննդի, ժամանցի օբյեկտներում:

Փլուզման 22 դեպք գրանցվել է մարզերում: 2007 թ. համեմատությամբ զգալի նվազում գրանցվեց բոլոր մարզերում, բացառությամբ Շիրակի եւ Սյունիքի, որտեղ դեպքերն ավելացան համապատասխանաբար 4 եւ 1 դեպքով:

Պայթյուններ

Գրանցվել է պայթյունի 33 դեպք (2007 թ.՝ 28, 2006 թ.՝ 29), զոհվել է 7 (2007 թ.՝ 4, 2006 թ.՝ 10), տուժել 22 (2007 թ.՝ 32, 2006 թ.՝ 35) մարդ: Առավելագույն ցուցանիշ գրանցվեց տրանսպորտային միջոցների մասնաբաժնում՝ 13 դեպք:

Պատահարներ ավտո, երկաթգծի եւ օդային ճանապարհներին

Գրանցվել է 2207 պատահար (2007 թ.՝ 1950, 2006 թ.՝ 1575), որոնցից 2202-ը՝ ավտոճանապարհներին:

Գրանցվել է 1 օդային պատահար. փետրվարի 14-ին «Զվարթնոց» օդանավակայանում թռիչքի ժամանակ վթարի է ենթարկվել «ԲելԱվիա» ընկերության «Ս-100» ինքնաթիռը, ինչի հետեւանքով տուժել է 11 մարդ: Հանրապետության երկաթգծի ուղիներին գրանցվել է 4 դեպք. Լոռու մարզում, ապրիլի 6-ին Շահալի-Թումանյան երկաթգծի թիվ 2636 ՊԿ-ում գծից դուրս է եկել բեռնատար 8 վագոն, որոնցից երկուսը շրջվել են: Հուլիսի 17-ին, կրկին Լոռու մարզում՝ Ալավերդի-Սանահին երկաթգծի թիվ 2608 ՊԿ-ի հատվածում բեռնատար վագոնի անիվը դուրս է ընկել ուղուց: Հոկտեմբերի 4-ին Արարատի մարզում՝ «Մասիս» ե/գ կայանում շրջվել են մեքուստար վագոններ: Նոյեմբերի 28-ին Լոռու մարզում՝ Թումանյան-Վահագնաձոր ե/գ հատվածում շրջվել է մանրախճով բեռնված բեռնատար զնացքի վագոնը: Գրանցված երկաթուղային պատահարներից մարդիկ չեն տուժել: ՃՏՊ-ների հետեւանքով զոհվել է 407, տուժել՝ 3125 մարդ (2007 թ. զոհվել է 371, տուժել՝ 2720, 2006 թ.՝ 329, տուժել՝ 2106 մարդ):

Գրանցվել է հերթական աճը՝ նաեւ զոհերի եւ տուժածների թվում:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ զոհերի աստիճանական աճ է գրանցվում երկրորդից - չորրորդ եռամսյակներում, իսկ տուժածների մասնաբաժնում՝ առաջինից - երրորդում, իսկ չորրորդ եռամսյակում նկատվում է նվազման միտում:

Զոհերի առավելագույն ցուցանիշով աչքի ընկավ հունիս ամիսը՝ 46 զոհ (որի ընթացքում, ի դեպ, նախորդ տարիներին գրանցվում էր նվազում), տուժածների՝ օգոստոսը (328 մարդ):

Սոցիալ-կենցաղային արտակարգ դեպքեր

Գրանցվել է 2761 սոցիալ-կենցաղային արտակարգ դեպք, զոհվել է 103, տուժել՝ 3459 մարդ (2007 թ. զոհվել է 129, տուժել է՝ 3032, 2006 թ.՝ զոհվել է 101, տուժել՝ 2387 մարդ):

2007թ. համեմատ գրանցվել է նվազում (87 դեպքով), իսկ 2006 թ. համեմատ ցուցանիշները մնացին բարձր (436-ով): Կտրուկ նվազում է գրանցվել զոհվածների թվում, իսկ տուժածների մասնաբաժնում գրանցվել է հերթական աճը՝ 427 դեպքով 2007 եւ 1052-ով՝ 2006 թ. համեմատությամբ: Կտրուկ աճը պայմանավորված է համաճարակներից տուժածների թվի զգալի աճով:

Ինչպես նախորդ տարիներին, 2008-ին էլ սոցիալ-կենցաղային արտակարգ դեպքերի գերակշռող մեծամասնությունը՝ 96,5 տոկոսը,

Բաժին ընկավ թունավորումներին:

2007 թ. համեմատությամբ ցուցանիշները նվազեցին դիակների հայտնաբերման (7 դեպքով) եւ պայթուցիկ սարքերի տեղադրման ահազանգերի գծով (7 դեպքով): Սոցիալ-կենցաղային արտակարգ դեպքերի 72,3 տոկոսը (1997 դեպք) գրանցվել է մայրաքաղաքում (2007 թ.՝ 1952, 2006 թ.՝ 1552 դեպք):

Թունավորումներ

Գրանցվել է թունավորման 2664 դեպք, զոհվել է 29, տուժել՝ 2864 մարդ:

Ինչպես 2006-2007 թթ., այնպես էլ 2008-ին թունավորման առավելագույն ցուցանիշներ գրանցվեցին անորակ ալկոհոլային խմիչքների օգտագործումից (թունավորումների մոտ 30,8 տոկոսը): Հերթական եւ զգալի աճ գրանցվեց դեղորայքից թունավորումների գծով. ցուցանիշները նախորդ երկու տարվա համեմատ աճեցին համապատասխանաբար 154 եւ 70 դեպքով:

Զգալի նվազում է գրանցվել սննդամթերքից թունավորումների դասում:

Գրանցվել է շնուլ եւ μ Վական գազի արտահոսքից թունավորման 271 դեպք, որոնցից 112 դեպքում՝ գազի արտահոսքից, 159՝ շնուլ գազից: Վերջինների հետեւանքով զոհվել է 11 (5-ը՝ գազի արտահոսքից) տուժել 458 մարդ (174-ը՝ գազի արտահոսքից, 284-ը՝ շնուլ գազից):

Ինը մարդ զոհվել է կենցաղային եւ արդյունաբերական քիմիական նյութերից, 4-ը՝ ալկոհոլից, 2-ը՝ դեղորայքից, 1-ը՝ սննդից եւ 2 մարդ՝ այլ աղբյուրներից:

Նախորդ տարիների նման՝ թունավորումների գերակշիռ մեծամասնությունը (մոտ 73 տոկոս 1945 դեպք) գրանցվել է մայրաքաղաքում, ընդ որում՝ հերթական թռիչքով (43 դեպքով):